ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/81 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան «25» հոկտեմբերի 2019թ.

ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքեր-շինությունների պահպանման բաժնի պետ.

Անդամներ՝

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)

Արթուր Շահինյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ.

Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ:

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)

Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

Բացակայում է.

Գոհար Մեսրոպյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ.

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը:

«Հայրենի տուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվեց իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել «Հայրենի տուն» ՍՊԸ-ին:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3) Հաստատել ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/81 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Հայրենի տուն» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Պողոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Շահինյան

_____ Գ. Բոյաջյան

_____ Վ. Դադոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Եղիազարյան